# Արա Գեղեցիկ

Վիքիպեդիայից՝ ազատ հանրագիտարանից



Արա Գեղեցիկ, հայոց թագավոր

**Արա Գեղեցիկ,** Հայկի սերնդից սերող հայոց արքա Արամի որդին է։ Մարմնավորում է հեթանոս հայերի հավատալիքները մեռնող և հառնող աստծու, բնության զարթոնքի, նաև ընտանեկան առաքինության և ողջամտության մասին։ Շարունակել է Ասորեստանի դեմ ուղղված հոր սկսած հայոց ազգային ազատագրական պայքարը։ Արայի պատմությունը վերջին և զարգացած փուլը տեղ է գտել «Արա Գեղեցիկ և Շամիրամ» առասպելում։ Արային նվիրված տոնախմբությունները կատարվում էին գարնանը և կապված էին բնության զարթոնքի հետ։ Արայի պատմության լայն տարածվածության մասին են վկայում Այրարատ, Արագած, Արայի լեռ, Արայի դաշտ, Արայի գյուղ և բազմաթիվ այլ տեղանուններ։ Արային էր նվիրված հայոց հեթանոսական տոմարի վեցերորդ ամիսը, որը կոչվում էր Արաց։

Որոշ ուսումնասիրողներ, ինչպես Արամին նույնացնում են Արամե Ուրարտացու հետ, այնպես էլ ընդհանուր պատմական զուգահեռներ են գտնում Արա Գեղեցիկի և Արգիշտի Ա Ուրարտացու միջև։

## Արա Գեղեցիկի տեղը Մովսես Խորենացու հայ ժողովրդի ծննդաբանության շարքում

- **Նոյ**
- Հաբեթ
- Գամեր
- Թիրաս
- Թորգոմ
- **Հայկ**
- Արամանյակ
- Արամայիս
- Ամասիա
- Գեղամ
- Հարմա
- Արամ
- Արա Գեղեցիկ[1]

## Կենսագրություն

Արա Հայոց Թագավորն ուներ կապույտ աչքեր։ Այստեղից էլ նրա անվանումը՝ Արա Գեղեցիկ։ Մարմնավորում է հեթանոս հայերի հավատալիքները մեռնող և հարություն առնող Աստծուն։ Արան ամուսնացել է հայուհի կնոջ՝ Նուարդի հետ։ Արայի և Նուարդի սիրո ու նվիրվածության մասին հայտնի էր բոլորին։ Նուարդ թագուհու մասին տեղեկությունները քիչ են, գրեթե չկան, սակայն պահպանվել են արտաքին նկարագրության մասին որոշ տեղեկություններ։ Նուարդն ուներ շագանակագույն աչքեր, սև մազեր և գեղեցիկ կազմվածք։ Նուրաղ անունը պարսկական անվանում է, այստեղից էլ ենթադրվում է, որ Թագուհին ինչ□որ կապ է ունեցել Պարսկաստանի հետ։

Արան իր հայոց երկրի նվիրյալն էր ու պաշտպանը։ Ասորեստանի թագուհի Շամիրամը սիրահարված էր Արային։ Սակայն պարզվեց, որ թագուհու սերը Արայի հանդեպ խարդավանք էր Հայաստանին տիրելու համար։ Ըստ նկարագրության, Շամիրամը բարձրահասակ էր և ուներ փոքր քիթ։

Արան չէր ենթարկվում Շամիրամին, իսկ դա թագուհուն դուր չէր գալիս։ Շամիրամը պատերազմ է հայտարարում Հայաստանի դեմ։ Արայի դաշտում տեղի է ունենում ճակատամարտ, որի ընթացքում, կռվելով իր զորքի առջևի գծում, Արան զոհվում է հերոսի մահով։ Բայց Շամիրամի սպասելիքները չեն իրականանում, որովհետև զինվորներին հանձնարարվել էր պատերազմից հետո իր մոտ *կենդանի* հասցնել հայոց թագավորին։


«Շամիրամը Արա Գեղեցիկի դիակի մոտ»։ Նկարիչ՝ Վարդգես Սուրենյանց

## Տե՛ս նաև

- Արա Գեղեցիկ և Շամիրամ

## Ծանոթագրություններ

1. The heritage of Armenian literature, Volume 1, стр. 66, Agop Jack Hacikyan, Gabriel Basmajian, Edward S. Franchuk, Nourhan Ouzounian (https://books.google.am/books?id=uvA-oV0alP8C&pg=PA66&dq=Ara+Armenian+deity&hl=en&ei=IzMFTaCkLsmEOoO9xaYB&sa=X&oi=book_result&ct=result&resnum=1&ved=0CCYQ6AEwAA#v=onepage&q=Ara%20Armenian%20deity&f=false)

(https://hy.wikipedia.org/w/index.php?title=%D4%BF%D5%A1%D5%B2%D5%A1%D5%BA%D5%A1%D6%80:%D5%80%D5%AB%D5%B6_%D5%B0%D5%A1%D5%B5%D5%AF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6_%D5%A4%D5%AB%D6%81%D5%A1%D5%A2%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6&action=edit)

*Այս հոդվածի կամ նրա բաժնի որոշակի հատվածի սկզբնական կամ ներկայիս տարբերակը վերցված է Քրիեյթիվ Քոմմոնս Նշում–Համանման տարածում 3.0 (Creative Commons BY-SA 3.0) ազատ թույլատրագրով թողարկված Հայկական սովետական հանրագիտարանից (հ. 1, էջ 665)։*

Ստացված է «https://hy.wikipedia.org/w/index.php?title=Արա_Գեղեցիկ&oldid=8510341» էջից